

Բնիկն եկեղեցի ալ չերթար. օդափոխութեան համար գեղը գնացող ազգայիններն են, որ կիրակիէ կիրակի եկեղեցի կ'երթան եւ քիչ մը ստակ կ'ծգեն:

Գեղիս ազգայիններուն մեծագոյն մասին գործն է սրճարաններու մէջ քաշուիլ եւ նարտ կամ թուղթ խաղալ: Պզտիկ մասն ալ ձուկ բռնելով կ'զբաղի:

Գիւղիս մէջ ազգային տեսակետով եթէ նշանաւոր եւ մեծ բան մը կայ՝ ան ալ հարուստ ազգայնոյ մը պարտէզն է, որուն դռները հասարակութեան երբեմն կ'բացուին եւ երբեմն կ'զոցուին:

Այս գիւղն շատ յարմար է ամեն անոնց, որք միայն զուարճանալու համար եկած են աշխարհ. ամեն տեսակ զուարճութիւն կայ հոն:

Այս գիւղը թէպէտեւ խոնաւ է, բայց գեղացիներուն գլուխները միշտ չոր են. չգիտեմ, թէ արեւո՛ւ մէջ կտաքցունեն, թէ փութի մէջ:

## **ԻԶ.**

### **ԵՆՆԻ ԳԱՐՈՒ**

Սքանչելի օդ ունի....:

Եննի Գարուցին առաւօտուն արթննալուն պէս կ'զգայ, թէ իւր գլուխն վրան է եւ թէ գողերը չեն կտրած գայն. սակայն երբ գլուխն գերցունել ուզէ՝ յուսահատութիւն կու գայ իւր վրայ, վասնզի գլուխն այնքան ծանր է, որ չկրնար վերցունել գայն:

Արդեօք այս գլուխներն շա՛տ մեծ են եւ ադո՛ր համար չեն կրնար վեր առնել զանոնք: Չեմ կարծեր: Արդեօք այդ գլուխները շա՛տ լեցուն են եւ ա՛յդ պատճառաւ է որ ծանրակշիռ են: Միթէ չգիտե՞ս, որ Եննի Գարուի մէջ պարապ գլուխներն ալ, որ թեթեւ ըլլալու էին՝ ծանր կ'կշռեն: – Թեթեւ երիտասարդներու համար ի՛նչ պատուական թաղ: – Արդ, Եննի Գարուցին երբ անկողինէն ելնել ուզէ՝ ուրիշ մէկը պիտի գայ իրեն օգնելու, գլուխն վերցնելու, որպէսզի կարողանայ կանգնիլ – հայկական յատկանիշ – ապա թէ ոչ շաբաթներով կ'պառկի: Եննի Գարուցիին գլխուն ծանրութիւնը ապացուցուած է գողութեան դէպքով մը որ հետեւեալն է. Եննի Գարուցի երիտասարդ մը իր նշանածէն համբոյր մը գողնալու համար՝ զիշեր մը անոր տունը կ'երթայ: Աղջկան հայրն, որ խաւարեալ էր եւ չէր ուզեր իւր ապագայ փեսայն հարսանիքէն առաջ տանը մէջ տեսնել՝ կ'իմանայ, որ փեսան դռնէն կամացուկ մը ներս մտած է, ուստի կ'երթայ գայն յանդիմանելու: Փեսան իւր ապագայ աները տեսնելուն պէս՝ պատուհանէն